ԾԱՆՈՒՑՈՒՄՆ.

Առ 1 յունվարի տարւոյս Ճեմարանիս ուսուցիչ հանգուցեալ Վարդան Աբովեանի որբացեալ ընտանեաց համար ստացուել էին նուէրներ ընդամէնը 578 ռուբլի։

Ըստ թացս յունվար ամսի ստացուեցան հետեւեալ նուէրները. ա) Արամ սարկաւագ Լիդիլեանն ուղարկեց Քարվանսարայ գիւղից 16 ռուբլի. բ) պ. Սարգիս Մ. Խաչակելեանն Ծկատերինոգարից 25 ռուբլի. գ) Սահակ քահանայ տէր Աբրահամեան Կարճեան գիւղից 1 ռուբլի. դ) Բագուեցի պ. Գրիգոր Թովմ. Այվազեան նուիրեց 25 ռուբլի. ե) Մարտիրոս աւագ քահանայ տէր Պօղոսեան Աղէքսանդրապօլից 10 ռուբլի. և զ) Երեւանայ թեմական դպրոցի տեսչի պ. Տ. Յովհաննէսեանի գրութեամբ ստացուեցաւ Երեւանում հանգանած 40 ռուբլի։ Ընդամէնն բոլոր նուէրների գումարն է 695 ռուբլի։ Վճարուեցաւ այրի տիկին Աբովեանին գտեր ուսման և սննդեան համար յունվար և փետրվար ամսի վարձ 20 ռուբլի։ Մնում է 675 ռուբլի (վեցհարիւր եօթանասուն և հինգ ռուբլի)։

ՏԵՍՈՒՉ ՃԵՄԱՐԱՆԻ

Կ. Կոստանեանց

ՏԱՃԿԱՀԱՅՔ.

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ

Տ. ՄԱՂԱՔԻԱ Ս. ՊԱՏՐԻԱՐՔԻ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆՆ։

Ամսոյս 5-ին Նորին Վեհափառութիւնն ստացաւ Կ. Պոլսից Ամեն. Տ. Մաղաքիա ս. Պատրիարքի և Նորընտիր կրօնական ժողովոյ անդրանիկ գրութիւնները։ Ամեն. ս. Պատրիարքն իւր առաջին գրութեամբ յայտնում է, Նորին Սրբութեան իւր որդիական անկեղծ շնորհակալիքը իրան ուղղած շնորհաւորական հեռագրի համար. յայտնում է, թէ որչափ մեծ են իւր սիրեցեալ ազգի ներկայ հանգամանքներում ունեցած հոգսերն ու վշտերը, մանաւանդ պատրիարքական պաշտօնի ծանր պարտականութիւնները, բայց ինքը յիշելով իւր նուիրական խոստումն ազգին ծառայելու համար, խնարհւում է այդ ծանր լծի տակ, ապաւինելով նախ յԱստուած, ապա ազգասան ու զօրավիգ խնդրելով ազգիս Վեհափառ Հայրապետի նուիրական օրհնութիւնն և երկնահաճոյ աղօթքը։ Նոյնը խնդրում են նաև կրօնական ժողովի անդամները։

Նորին Սրբութիւնը գտնելով այդ կրկնակի ընտրութիւնները համաձայն տրամադրութեան Ազգ. Սահմանադրութեան՝ բարեհաճեցաւ առանձին Հայրապետական կոնդակներով օրհնել նորանց։ Նախ Ամեն. ս. Պատրիարքին յիշեցնելով Նորա կոչման մեծ նշանակութիւնը և ազգի նորա վրայ դրած մեծամեծ յոյսերը, շնորհեց նորան Արքեպիսկոպոսութեան տիտղոս, իւր Անուանակոչութեան օրը ամսոյս 14-ին։ Նոյն օրհնութիւնը տալով նաև Կրօնական ժողովոյ անդամներին, յիշեցրեց նոցա իրանց պարտքերը, պատուիրելով հարազատութեամբ ծառայել ազգին և եկեղեցուն, օգնական լինել յամենայնի Սրբազան Պատրիարքին և չը մոռանալ հեռաբնակ հօտը, որ այժմ շատ տեղերում մնում է առանց հովուի և առաջնորդի։

Նոր-Դարի 2 հ.-ում մի թղթակից, խօսելով Ծննդեան տօնի մասին, առաջարկում է Կ. Վ.-ին Արարատի միջոցաւ բացատրել Ցայտնութեան և Ծննդեան տօների պատմական ծագումը։ Հրաւիրում ենք այդ առթիւ կարդալ 1896 թ. յունուար՝ «Աստուածայայտնութեան տօնի ճիշդ օրը ըստ պատմութեան» յօդուածը։ Լրացուցիչ տեղեկութիւններ, յատկապէս Յարութեան տօնի մասին, կաշխատենք զատկին ընծայել։

Բագուից պ. Ա. Ֆատուրեանն ուղարկելով ամսագրիս տասն օրինակի բաժանորդագին, երեքինը թողել էր խմբագրութեանս տրամադրութեանն. խմբագրութիւնս որոշեց ուղարկել՝ 1. Մարաղայի Հայոց ընթերցարանին, 2. Սախալին կղզու հայերին և 3. պ. Նորայր Բիւզանդին։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Կոնդակ Բանուն Տ. Սիօն վարդապետի՝ Գործ. Ն. Բայազիտայ, որով շնորհի նմա լանջախաչ վարդապետական Թ. 1868 31 դեկտ. 1896 թ.

— Բանուն Տ. Կարապետ վարդապետի՝ օգնականի տեսչի Ճեմարանի Մ. Ամոռայ, որով շնորհի նմա լանջախաչ վարդապետական. թ. 1. 1897 թ.

— Բանուն Ս. Սինօդի գկարգմանել Գեր. Մակար եպիսկոպոսի յաւագ լուսարար Մ. Ցաճարի. թ. 6.

— Յանուն Գեր. Մակար եպիսկոպոսի Բարխուդարեանց, որով կարգի աւագ լուսաբար Մ. Տաճարի. Թ. 7.

— Յանուն Ամեն. Պատրիարքին Կ. Պոլսոյ Տ. Մաղաքիա եպիսկոպոսին, որով շնորհի նմա պատիւ Արքեպիսկոպոսութեան. Թ. 15.

— Յանուն Եղիշէ քահանայի Տ. Մանուէլեան՝ Գործակալին Վաղարշապատ, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական ըստ միջնորդութեան կառավարչի Թեմին Արցախայ. Թ. 16.

— Օրհնութեան և հաստատութեան յանուն Նորընտիր Կրօն. Ժողովոյ Կ. Պոլսոյ. Թ. 25.

— Յանուն Ս. Սինոդի, ընդ որում յանձնեցաւ 12000 բուբլի կտակեալն ի Տիկին Շողակաթէ Մ. Մելիքեան Բագուեցւոյ. Թ. 25.

— Յանուն Ս. Սինոդի, որով յանձնաբարեցաւ կարգել զմինն ի միաբանից Մ. Աթոռոյ ի գանձապահ սինոդի ի տեղի Գեր. Գառնակերեան եպիսկոպոսի. Թ. 44.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

1. ԿՈՆԴԱԿ 4
2. Ժամանակի եւ կեանքի վերանորոգողը . Կ. Վ. 5
3. Սէր առ Աստուած . . . . . Ն. Վ. 3
4. Կանոն Թադէոսի Առաքելոյն . . . Կ. Կ. 6
5. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԶՐՈՅԵՐՆ 8

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

6. *** . . . . . Ե. Յովհաննիսեան 14
7. Տէր Պետրոս Ա. Գետադարձ . . . Կ. Կ. 12

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

8. Կարգապահութիւնը միջնադարեան դպրոցում եւ միւս պայմանները . . . Ս. Ե. 27
9. Ժանտախտի սպառնացած վտանգը . . . 29
10. ՄԱՆՐԱՎՈՒՐՔ 30

ԱԶԳԱՅԻՆ

11. Արարատի նոր տարեշրջանը 31
12. ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ 32
ՄԱՅՐ ԱԹՈՌ . . . . . .
ՏԱՃԿԱՀԱՅՔ . . . . . .

ՊԱՀՏՕՆԱԿԱՆՔ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.
ՅԱՒԵԼՈՒԱԾ.
ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՅԱՒԵԼՈՒԱԾ ԱՐԱՐԱՏԻ 1897 Թ. ՅՈՒՆՈՒԱՐ.

ՄԽԻԹԱՐԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԱԿԱՆՈՒՆ ԿՈՉԵՑԵԱԼ ԳՈՇ.

ՆԵՐԲՈՂԵԱՆ ԱՍԱՅԵԱԼ Ի ՆՈՐ ՎԿԱՅՆ ԿՈՉԵՑԵԱԼՆ ԽՈՍՏՐՈՎ 1

Զուարճանան ժողովուրդք նմանպէս ի յիշատակ կանուխ և անագան վկայից, զի մի է հաւաքումն հեռաւորութեան ժամանակին, որ առ Տէրն մեր։* Քանզի յանցեալ և ի ներկայ** և յապառնի այլայլի, այլ ոչ զտիրապէսն փափագ։ Վասն զի բնաւոր այսպէս, և ոչ պատահմամբ զնա ստացեալ ունիմք։ Ըստ որում ո՛չ հուր և ոչ սուր, և ոչ այլ ինչ ներհակ*** հատանել զնա ի զանազան կարէ ժամանակի, զի յստացողէ աղաւաղիլն է և արծարծիլն։ Նաև ոչ գիտէ ընարել**** երեսս իբր ճոխի և աղքատի, առն և կնոջ, մանկան և ծերոյ, կուսի և երիտասարդի. այլ զիւրն գտեալ արժանի՝ բնակէ, և ի նոսին ներգործէ։ Ապականչաւքն զաւրանայ և ի խափանիչսն սքանչելի***** լինի։ Ի վեր քան զկարիս ամբառնայ մարմնոյ, անհայր ուսուցանէ և անմայր, զմի և եթ գիտել, որ պատճառն է բնաւից։ Ինդայ ընդ չարչարանս, մեծարէ զվիշտս, կերակրի նախատանաւք, ուրախանայ հալածանաւք։ Ճոխանայ աղքատութեամբ, բերկրի տնանկութեամբ,****** մեռանի կենդանի, յառնէ մեռեալ։ Ասէ զաշխարհ, գարշի որ ի նմա, խոկայ ի տուէ, հսկէ ի գեշերի։ Զարթուցա-

* Զ. տէր սերն
** Զ. ներկեա
*** Զ. ներընակ
**** Զ. ընդրել
***** Զ սքանչելի
****** Զ. տնանգութեամբ

1. Տես «Արարատի» նախընթաց համարում Խոսրով Գանձակեցու վկայաբանութիւնը։ Գ. Տ. Մկ.